

Թեկխտտուտի հեղինակը պիտի ըսէի ըրիստոնեայ մըն է, որ կը բռնէ մահմէտական է դարձեր, բայց դեռ շատ հաճութեամբ կը յիշէ իր մանկութեան ժամանակ սովորածները: Մերիամի պէս իր Թէվէտտուտին գերուհին ալ պիտի ըսէի ըրիստոնեայ բարեկիրթ բամբիշ մէ, որ իր սրբածին հետեւելու համար մահմէտական կը դառնայ, բայց առանց ատելու ըրիստոնէութիւնը: Եւ ի՞նչ բան կը պակսի այս հեղինակը ըրիստոնեայ եղած կարծեւ, երբ Յիսուսի համար կը գրէ « զոր Հոգին սուրբ յղացուց Մարիամու արգանդին մէջ, (էջ 215):

Մինչեւ հիմայ բաժնեկրս ինծի այն համոզում տուած են, որ Հարցմունք Աղիւտը՝ հազարամէկ գիշերներու շարքին կը պատկանի. քնագիրը արարերէն գրուած է ԺԴ դարուն սկիզբները. հեղինակը նոյն ըլլալու է Թէվէտտուտի գրողին հետ: Հայերէնը թարգմանութիւն է արաբերէնէ, և կատարուած է ԺԴ դարու կիսէն յառաջ՝ բայց միշտ նոյն դարուն մէջ: Ասկիւայ ձեռագիրներուն մէջ ընդհանրապէս Պղնձի Բագրին հետ օրինակուած է և հրատարակութեանց մէջ միշտ անոր հետ տպուած: Այս հանգամանքը կրնայ կարծել տալ թէ վէպին թարգմանիչն ալ՝ ըլլայ Առաքել Շիրակլանցին՝ որուն է հասանօրէն Պղնձի Բագրին հայացումը. բայց տեսնեք որ այս վէպը ամենէն կանուի՝ ԺԴ դարուն սկիզբները կրնայ գրուած ըլլալ, մինչ Շիրակլանցիի գործունէութիւնը ԺԴ սկիզբները կ'իյնայ: Կը ֆիայ ԺԴ. դարու կիսէն յառաջ, բայց միշտ նոյն դարուն մէջ՝ փնտռել ասոր թարգմանիչը: Լեզուական քանի մը նմանութիւններ, — որոնք վերը նշանակեցինք, և խոստովանուելու է թէ շատ չեն, — փաստ մը կու տան կարծելու որ Կոստանդին է Հարցմունք Աղիւտ վէպին թարգմանիչը: Ասկէ՝ զատ նոյն ժամանակները ինքն է միայն այս տեսակ գրականութեամբ զբաղող: Այս կարծիքին հաստատութեան իրրեւ փաստ՝ առ ժամս ասկից աւելին չունինք. բայց հակառակն ալ՝ բոլորովին կը պակսի:

Եթէ այս ենթադրութիւնը ուրիշ քննութիւններ աւելի հաստատեն, Կոստանդին Երզնկացիի ղեմքը աւելի պիտի պայծառանայ մեր մատենագրութեան մէջ, և աւելի լայն ծրագրով մը նոր զարդեր մը հիմնադրէր պիտի ողջունուի:

Հ. Ն. ԱՆԿՐԻՍԻԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅԻ

(Շար. տն'ս էջ 256)

Յովհաննէս Երզնկացւոյ անուամբ հասած ամենէն գեղեցիկ և ինքնատիպ է վեցերորդ երթումը կամ տաղաշարքը:

- Զ. — Երկուսն ի մէկ սեղ բերած զէտ ընկեր կ'սանն
 Թէ պահէ
 Ու չորս բնութիւն օտար, հետ իրաց կ'սանն
 Թէ ազգէ.
 Հինգ դուռն է ի բաց թողած, զայդ ամբոյ կ'սանն
 Թէ փակէ
 Չէտ հոցն ի յասոնց միշին, զէտ կըրակ ըզմոտ
 կու հալէ:

Այլ և այլ ձեռագիրները իրարու հետ բաղդատելով՝ գրեթէ 30—40 քառականեր երեւան կու գան: Իւրաքանչիւր տող տասն և հինգ տեսն է: Ամբողջ երթումը ընդհանրապէս կրնայ բաժնուիլ 5—5—5, նոյնպէս կաֆաներու չափով 5—2—5—3:

Այս տալիս ձեռագիր օրինակներէն ոմանք Յովհաննէս Երզնկացւոյ կ'ընծայեն զայս, իսկ այլը՝ Խմաստեոց ասացեալ խորագրով կը հասցնեն:

Երզնկացւոյ այս տաղաշարքին բաւական քառականեր հրատարակած է Ա. Չօպանեան իր Քոչակի Դիւանը հրատարակութեան մէջ, Քուչակի խրատական և այլ խորտական տաղաշարքին մէջ, իրրեւ հեղինակութիւն Միտոյ երգչին: Ա. Չօպանեան սակայն չի պնդեր թէ Քուչակին պէտք է վերագրել խրատական քառակաները. ինքը

հետեւած է Տէվկանցի հրատարակութեան, որ՝ ինչպէս որ Զեռագրին մէջ գտած է այլ և այլ երգիչներու քառականները՝ միայն խառն հրատարակած է՝ 1. ինքը Զօպանեան իր հրատարակութեան վերջը ծանօթութեանց մէջ իր կարծիքը յայտնած կ'ըլլայ՝ երբ կը նշանակէ այլ և այլ Զեռագիրներ, որոնք յիշեալ քառականը՝ Ֆիրկի կամ Յովհ. Երզնկացւոյ, և այլն, կ'ընծայեն. և արդէն առ իս գրած նամակաւ Քուչակի հրատարակիչը կ'ախորժի « Երկունս ի մէկ տեղ բերած » տաղաշարքը Յովհաննէս Երզնկացւոյ ընծայել և Մինչդեռ Մեծ. Նորայր մի քանի պատճառներու համար յիշեալ տաղաշարքը Քուչակին հեղինակութիւնն ըլլալ կ'ենթադրէ և Այդ պատճառներն են օտար բառերը, և նմանութիւնը իմաստից կամ ըստաճըներու՝ որ կան այս տաղաշարքին և Քուչակի Սիրոյ երգերուն մէջ:

Բայց սակայն Յովհ. Երզնկացւոյ Ե.Ը (Աւերհայ Աստուծոյ անունն) տաղաշարքին մէջ՝ օտար բառերու և ռամկական տղերբու գոյութիւնը հաստատեցինք. և այդ տաղը չի՛ կրնար Քուչակին վերագրուիլ, քանի որ Յ. Երզնկացւոյ կենդանութեան օրով 1324ին օրինակուած է: Իսկ գալով միւս պատճառին՝ այն է՝ թէ « Երկունս ի մէկ տեղ բերած » ի շատ քառականները Քուչակին տաղաշարքին մէջ կը զատուին, այդ ալ պէտք է վերագրել օրինակողաց ախորժակին, որոնք հաւասար չա-

փերով քառականներն՝ այլ և այլ երգիչներու գործերէն կը հաւաքէին. և այն տաղաշարքը՝ զոր խառն ի խառն հրատարակած է Հ. Տէվկանց՝ Քուչակի անունով՝ գրաբար քաղուածք մ'է՝ սիրոյ և այլաբանական և իրատական տաղաշարքերէ, որոնց հեղինակներն են Քուչակ, Խաչատուր Կեչառեցի, Ֆիրկի, Կոստանդին և Յովհաննէս Երզնկացիք, Աղեքսանդրի Պղզընձէ քաղաքի, Փահլու թագաւորին պատմութեանց Կաֆաներէն՝:

Մենք համոզուած ենք թէ ապագային քննութիւնը՝ ոչ մի խրատական քառական թերեւս պիտի չնուիրեն « Քուչակ » ի Քուչակը սիրոյ երգիչ մ'է, և գոհ պիտի ըլլայ ինքը՝ որ իր գրական արտադրութեամբ (սիրոյ քառականներով) արդէն իր անունը ապագային մէջ պիտի յիշատակուի միշտ:

Եթէ « Երկունս ի մէկ տեղ բերած » ի և Քուչակի սիրոյ-քառականներուն մէջ նըմանութիւնը կը նմարուին, ինչու՞ չմտածել թէ « Քուչակ » կարդացած է իր նախորդ աշուղները, և անոնց ըստաճները իւրացուցած, ինչպէս որ կարդացած է զկոստանդին Երզնկացին՝, Քուչակը երբէք պիտի չըաշուէր Յովհ. Երզնկացւոյ իմաստներն ու ըստաճներն իւրացնելէն, մանաւանդ որ վերջինս աւելի նշանաւոր անուն մը թողած է թէ՛ ժողովրդեան և թէ՛ լիկեիցեւոյ մէջ:

Քուչակն իր սիրոյ-երգերուն մէջ, իսկ

1. Տե՛ս. Հայեր, Թիֆլիս, 1882, էջ 27-45.

2. Համոզել պատճառներ ունիմ, որոնցմով ուրիշ անգամ՝ պիտի ցուցնեմ՝ Քէ Ֆրիլը Խաչատուր Կեչառեցւոյ կեղծ անունն է:

3. Շարք մը վէպեր և տաղաշարքեր ու քերթուածներ կան՝ որոնք ամէնքն ալ նոյն ձևով են թէ՛ իմաստներով և թէ՛ լեզուի քերականութեամբ, այնպէս որ այդ ամէնքը միասին Կոստանդին Երզնկացւոյ գլուխը պիտի փաթթենք! Եթէ այդ ԺԳ-ԺԵ դարերու հիմնական ուսումնասիրութեան մը վրայ չբարձրացնենք շեքը: Յուսանք թէ պիտի կարենանք տարբեր լուծումներ առաջ յանդիմաներուն՝ որոնց մի մասին տուաւ « Բազմավէպ » ի ՀԱՅ Վէպերէն ստորագրողը:

4. Ասոր աւելի թարմ օրինակ մ'է հետեւեալը: Քուչակի երգու անիպ և նորագոյն տաղաշարքեր, որ նո-

րիս զայս մեր Մատենադարանի 160 թիւ ձեռագրին մէջ՝ անի հետեւեալ քառանքը.

Տարին տասներկու ամիս (կը պակսի երեք վանկ) պըլ-պուլն է խօսեր

Նա վարդն ի յատու նկեր պըլպուլին ազէկ թուացեր. Պատուր ըզկանանը կապան ու զկարմիրն շուտ մ'է հազեր, և այլն:

Այս առիթու Կոստանդինի ԺԱ քերթուածին հետեւեալ սողգերուն պիտմամկամ ըստաճք է, Կոստանդին կը գրէ

« Նա լըսէ գժայն բըլբուլին վարդն ու բանայ զգուտըն վըրանին

Հանէ ըզկանանը կապան՝ ու հազնի զիւ խըրմըզին »:

Յ. Երզնկացւոյ « Երկունն ի մէջ տեղ բե-
րած » ի մէջ՝ տարբեր հոգիներ և տարբեր
զգացումներ կը ցուցադրեն:

Քուչակ կը գրէ (Հրտ. Զօպանեանի 17.
էջ 50)

Երնէկ ես անոր կու տամ որ առեր իւր ետին է վախեր ,
Ոնց որ զկամուրջն անցեր , Զուրն էլեր զկամուրջն է տարեր ,

Ընդ հակառակն Յ. Երզնկացի կը գրէ
« Երկունն ի մէկ տեղ բերած » ի մէջ:

Երնէկ այն մարդուն ստեմ (որ) աշխարհիս հետն սկը չունի ,
Զանձըն կուտութեամբ պահէ , և զլեզուն ի իւր հրամանի :

Իսկ Ֆրէկը՝ Քուչակին աւելի մերկ բա-
ցատրութեամբ կ'ըսէ՝.

Երնէկ իս նորա կու տամ՝ որ բզդէն ի սիրտն ունենայ ,
Զամեն հաւատարմ սերէ , շարութեան տեղ իսկի չի տայ :

Մեր մատենադարանի Զ զանձարանն
եւս , նոյնպէս Վիեննական հարց 344 թիւ
Չեռագիրն , Յովհաննէս Պրալի խորագրով
կը հասցնեն մեզ « Երկունն ի մէկ տեղ բե-
րած » տաղաշարքը . և վերջինս սա խո-
րագիրն ունի . « Երգ Յովհաննէս Պրալ
վարդապետի ասացեալ , խրատը ոգեշահը
ի յօգուտ մարդկան , քաղցր եղանակաւ
ասա » ։ Յայտնի է որ այս իմաստնալից
քառեակները կ'երգուէին ժամանակաւ՝ այդ
պատճառաւ է որ վերոյիշեալ Զ Գանձա-
րանը Շարականի խաղերով կը ներկայացնէ .
զայն : Մեր Գ տաղարանը եւս (թիւ 234)
Յովհաննէս Պրալի խորագրով կը հասցնէ
մեզ « Երկունն ի մէկ տեղ բերած » ք :

Է. — Եակոբ , զարթիր ի քնոյ մեղաց ,
Սըրտի մըտօց զականջլոց բոց :
Լըսէ թէ ինչ կ'ասէ Աստուած
Իսրայէլի ' և ամեն ազգաց :

Քերթուածս՝ որուն լեզուն աւելի աշ-
խարհաբարի կը մօտենայ՝ 45 տուն է :
Ստէպ իւրաքանչիւր տան չորրորդ տողը
« Յակոբ զարթիր ի քնոյ մեղաց » ով կը
լեցնէ : Նիւթն է խրատական և միանգա-
մայն զուարճարան :

Ը. — Յամենահաւ զործա Սրարչին որ գոյացան՝
Մեծ և ահեղ բացանկիթ ներդրեցան .
Ոմանք ի տես զարմանալեաց յօրինեցան
Եւ այլը ի պէտս վայելչութեան մարդկան տուան :

Գիտական քերթուածիս՝ որ Յովհ. Եր-
զնկացւոյ ընդարձակագոյն տաղաչափեալ
արտադրութիւնն է՝ ոմանք ի Չեռագրաց
սա սկզբնաւորութիւնն ունին « Սմենահաւ
զործ Սրարչին » , այլը « Յամենայն հրա-
շագործ » . ուղղագոյնը վերը մեր դրածն
է , ինչպէս որ ունի նաեւ Նիսիթեանի
տաղաքեալ օրինակը : Պէտք է Յ տառով
սկսի վասն զի քերթուածիս նախաբանին՝
մէջ ընդ մէջ տողերու սկզբնատառերն՝ կը
յօդեն « Յոհաննիս բան յաղագս երկնի ի
խնդրո իշխանի Հայոց Ապլոց անուն » ։
Սխալ է նաեւ Յամենայն հրաշագործ սկզբ-
բնաւորութիւնն , վասն զի ամբողջ քերթուա-
ծին տողերը կը բաժնուին 4-4-4-4 :

Ինչպէս գիտական նիւթը կը պահանջէ՝
քերթուածս գրուած է դասական լեզուով ,
և ծայրէ ի ծայր բոլոր տողերը անով կը
վերջացնէ :

Թ. — Յամենայն մեղաց ի զատ ասէ դու կացիր
Եւ յօրին տառուածայինս միշտ մերժեցիր .
Թէ ծեր ես՝ (է՛)՝ համբերէ՛ , թէ տղայ՝ դու ուսիր ,
Թէ երեստաարդ՝ յաղթելու ժիր դու կացիր :

Ինչպէս ըսինք ուրիշ անգամ՝³ Մ. Կ.
Կոստանեանց այս տաղը Յովհ. Թլկուրան-
ցւոյ կ'ընծայէ , և կը հրատարակէ խան-
գարուած և պակասաւոր ձեռագիր օրինա-
կէ մը . տաղաչափութիւնն է 7-5 , ինչ որ
սովորական է եկեղեցական տաղաչափեալ
երգերու և գանձերու : Զարմանալի է որ
այս տաղին բոլոր ձեռագիր օրինակները
շատ խանգարեալ կերպարանքով կը ներ-
կայացնեն մեզ այս տաղը . ոմանք ութը
տուն ունին , այլը՝ տասը , ուրիշներ տասն-
երեք , և այլն : Մեր 1339 թիւ ձեռագիրն
համաձայն՝ տաղիս տուներուն սկզբնատա-
ռերը կը յօդեն « Յոհաննիս վարդ » (Թուղթ

1. « Ով տավի խելաց այն է՝ թող անհոգ ի քուն չի
կենայ » քերթուածին վերջեր (ըստ 1304 թիւ Չեռագիր
Մաշտոցին , էջ 483-5) :

2. Ըստ այլ օրինակի :

3. Տես « Բագմ. » 1905 , թիւ 10 , մեր Յովնանմէտ
թղկուրեանցի յօդուածը :

կը պակսի ձեռագրէն)։ Իսկ 1371 թիւը՝ «Յոհաննիսի եհվլա», 1289 թիւ ձեռագիրը՝ «Յոհաննիսի՝ վաթլասեա»։ Բարեգեան օրինակի տանց սկզբնատառերն ալ կը յօդեն «Յոհաննիսի վաեկ աա»։ Դեռ ուրիշ բնտիր օրինակներ անհրաժեշտ են՝ երեւան հանկու համար ճշգրտոյն բնագիրը²։

*

Հ. Տաշեանի Մայր Յուցակին մէջ (տես ի ցանկն, էջ 1126) Յովհաննէս Երզնկացւոյ անուան ներքեւ ի շարս տաղից կը նշանակուի՝ «Արար Աստուած զմարդն ի հոգոյ», և կը ցուցուի Յուցակին 398 և 851 էջերը։ Նախորդին մէջ Յ. Երզնկացւոյ անուամբ կայ սա խորագրով՝ «Խրատը հոգեւոր և պիտանի Յովաննէս վարդապետի ասացեալ, որ կոչի Պրոպ», և տաղը սա սկզբնաւորութիւնն ունի։ «Արար Աստուած մարմին հոգի, հոգի և մարմին, և զարդարեաց ի նմանութիւն իւր»։ Իսկ յէջ 851 սա սկզբնաւորութեամբ «Արար Աստուած զմարդն հոգի և մարմին, և զարդարեաց ի նմանութիւն իւր»։ Այս գրութիւն՝ որ իբրեւ տաղ կը յիշատակուի՝ կարծեմ արձակ պէտք է ըլլայ։

Հ. Տաշեանի Յուցակէն կ'իմանանք որ Յովհ. Երզնկացւոյ գրութիւնը և տաղը թաթար լեզուով թարգմանուած զը զրոնուին իրենց Մատանադարանին մէջ։ Եւ նոթ պիտի ըլլայ ընթերցողաց Յովհաննէս Երզնկացւոյ անուամբ Կ. Կոստանեանցէ հրատարակած «Այս ինչ կրակ էր այրեց» զուարճարան տաղը։ Մեծ. հրատարակչին Ձեռագիր օրինակէն՝ վերջի փոքր մի մասը կը պակսի։ Այս բերթուածին ոճն և լեզուն կ'ապահովցեն ընթերցողը՝ որ այս Յովհաննէս կատակարանը Պրոպը չէ, այլ անոր հայրենակիցը, որ ապահովապէս ժեղարէն վերջ կ'ապրէր։

Հ. Մ. ՊԱՏՈՒԵԱՆ

ԱԶԳԱՊՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԻ «ՇԵՐ»ԵՐ

Նախընթաց խոստումի մը համաձայն, կը փութանք զաւառական Շերերու փունջ մը ներկայացնել բանասէր-գրասէր ընթերցողներուն, որոնք հաճոյք կը զգան ինքնաշատուկ բանաստեղծութեանց այդ փշուրներուն մէջ ըննասիրելու բաներ մը գտնել։

Իրօք ալ, ասոնց մէջ պակաս չեն բնատուրէր բարբերու և լեզուի, զգացումի և գաղափարի արտայայտութեան մասնաւոր յատկանիշեր, ընդու ու արտայայտ շեշտեր, որոնք զաւառի հայ կնոջ՝ — խաթուն մաւ միկէն մինչեւ մատղաշ աղջնակին՝ — հոգեկան վիշտերը կը խտացնեն։ Կարծես, անոնց մէջ բիրեղի պէս կը ցոլանան սիրակցորդ էակի մը մահուան առթիւ իրենց թափած արցունքները ...:

Այս շերերը կամ լացերը մասնաւորապէս Ակնայ մէջ կ'եղբերեգուին, և ուրիշ բան չեն՝ բայց եթէ ողբեր կամ ջայլեր։ Գորս լալազին շեշտելով կ'ողբերգին ըստ պատշաճի և պարագայի։ Մեռելներու վրայ լալու սովորութիւնը շատ հին է։ Տեղեր ալ կը յիշուին՝ ուր մասնաւոր լալկան կը նիկներ (եղբրամայրեր) կան։ Բայց մեզի ծանօթ զաւառներէն և ո՛չ մէկուն մէջ վաճու լալկան բերել տալու սովորութիւն կայ։ Եւ ի՞նչ հարկ ասոր, արդէն ամէն կին ունի իրեն համար լալիք մէկը՝ մեռած կամ բացակայ՝ երկարատեւ պանդխտութեամբ, անոնց յիշատակը միայն կը բաւէ իր բոլի սիրտն ու հոգին խոռվելու և աչքերէն արցունք հոսեցնելու։

Այս լացերէն մեծ մասը հինէն մնացորդ-

1. Այս 1289 Ձեռագիրը փոխանակ «Եամնայն մեղաց»-ի՝ ունի «ամնայն մեղաց»։

2. Մեր նախորդ յօդաւածին մէջ Յ. Երզնկացւոյ տա-

ղերուն թիւ տասնի հասուցած էինք՝ անուշադրութեամբ մէջ առնելով Առաքել վարդապետի «Խոյն և զուլի» որ է պարսիկ» աստեղագիտական քերթուածը։